ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ - Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Սույն թվականի օգոստոսի 19-ին 1700-ամյակի տոնակատարությունների շրջանում սկիզբ առավ անդրանիկ ուխտագնացությունը Ռումինիայից Հայաստան ժամանումով՝ գլխավորությամբ և առաջնորդությամբ 1700-ամյակի գրասենյակի ընդհանուր տնօրեն գերշ. Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի, Ուխտագնացությունների հանձնախմբի ատենապետ գերշ. Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի և Ռումինիայի Հայոց առաջնորդ գերշ. Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի, ինչպես նաև Հայաստանյայց Եկեղեցու զանազան թեմերից ընկերակցող հոգևորականների (Գերմանիայից՝ Տ. Սերովբե վրդ. Իսախանյան, Լիբանանից՝ Տ. Մեսրոպ քհն. Քրքզյան, Ռումինիայից՝ Հայկ սրկ. Ազարյան): Ուխտավորների առաջին այս խումբը դիմավորվեց մեծ խանդավառությամբ Ուխտագնացությունների Հայաստանյան հանձնախմբի և ժողովրդային մեծ բազմության կողմից: Դիմավորմանը ներկա էին զանգվածային և լրատվության միջոցների ներկայացուցիչները:

Օգոստոսի 19-ին, երեկոյան, Հայաստան ժամանեց նաև Ուկրաինայի Հայոց առաջնորդ գերշ. Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի գլխավորած Ուկրաինայի ուխտավորների խումբը:

Ամստերդամով ուխտավորների մեկ այլ խմբի հետ Հայաստան ժամանեց Մեծի Տանն Կիլիկիո ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդ. գերշ. Տ. Մուշեղ եպիս. Մարտիրոսյանը: Օգոստոսի 17-ից Երևանում էին գտնվում Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդ գերշ. Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Հարավային Ռուսաստանից, Թեհրանից ու Նոր Ջուղայից ժամանած ուխտավորների խմբերը:

Հարկ է նշել, որ «Հայաստան երկիր ուխտավայր» ծրագրի նկատմամբ մեծ հետաքրքրություն են ցուցաբերել նաև քույր եկեղեցիները, որոնց ներկայացուցիչներն ու անհատ եկեղեցականներ իրենց մասնակցությունն են բերում այս ուխտագնացությանը (Գերման, Անգլիկան, Ռումին և այլն): Ուխտավորների հետ Հայաստան են ժամանել զանազան երկրների թղթակիցներ, որոնք հանգամանորեն լուսաբանելու են ուխտագնացությունների հետ կապված բոլոր մանրամասնությունները:

Անդրանիկ այս ուխտագնացության լավագույնս անցկացման համար մեծապես զգալի է պետության, Հայց. Եկեղեցու բոլոր թեմերի առաջնորդ սրբազանների և ժողովրդի սրտակից նախանձախնդրությունը, որի շնորհիվ էլ Ափյուռքից ժամանած ուխտավորների խանդավառությունն էլ ավելի մեծ թափ է ստանում: Տրամադրվել է շուրջ 10 հանրակառք. ամեն մեկը կրում է որևէ ուխտավայրի և սրբավայրի անունը՝ Մշո Ս. Կարապետ, Հաճկատար, Նարեկ, Վարագ, Գեղարդ, Գանձասար և այլն:

Դիտան 1700-ամեակի